



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1799
Մայիս 26, 1994

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեան
Հովի Ա. Աստուածածին Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուաշինկթըն Տի. Սի.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մայիս 23, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 20, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Վրոյր Աղամալեան
Տէյվիտ Անտոնեան
Վարդգէս Քէշիշեան
Քնարիկ Մովսէսեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Ծխական Խորհուրդի ներկայացուցած էլեւմտական գումարները չեն համապատասխաներ Անդամական Ժողովին ներկայացուած տարեկան տեղեկագրի գումարներուն, եւ էջ 12-ի վրայ չէ յիշուած հաշուական տեղեկագիրներուն աղբիւրը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ